

# Հ Ա Շ Ի Ի

Հոգարարձու կառավարչի Հաւլարարի «Խօջիվանքի» Հանգստարանի ի 11 էն Ապրիլի 1883 թ. ց22-ն Մարտի 1887 թ.

Բոլոր քրիստոնեայ ազգերը իւրաքանչիւր տարի որոշեալ օրերում կատարում են հոգեհանգիստներ իւրեանց հանգուցեալների վերայ: Արտաքոյ սորա կից լուսաւորութեան աճումէ հոգատարութիւն անմահացնելու հանգուցեալների յիշատակը, դնելով նոցա գերեզմանների վերայ արժանի մահարձաններ և առհասարակ բարեկարգել այնպէս, ինչպէս որ համարեա բոլոր Եւրոպական քաղաքներում տեսնուամենք. այնտեղ հանգստարանները ներկայացնում են մի գեղեցիկ բուսականութեան պարկ, ծառայելով ժողովրդեան որպէս տեղի զբօսանաց և հանգստութեան:

Հատ զգալի է որ այդ տեսակետից, ինչպէս և ուրիշ բազմաթիւ բաներից մեր Թիֆլիզը շատ յետ է մնացել. քաղաքային հանգստարանները մնայել են արտաքոյ որեւէ ուշադրութեան. նոյն դրութեան մէջ գտնվում էր և Հաւլարարի «Խօջիվանքի» հանգստարանը ու դարձել էր թղթախաղութեանց և զանազան զեղխութեանց տեղ, տեղական կիստօների:

Մի քանի բարեմիտ հայ անձանց տոկուն աշխատութեամբ և քաջալերութեամբ նախանդամ կոնսիստորիայի Մամրէ վարդապետի, (այժմ Եպիսկոպոսի) 1883 թուականին Թիֆլիզի առաջնորդարանում կայացաւ ժողով, Հաւլարարի «Խօջիվանքի» հանգստարանի բարեկարգութեան համար, որ և կազմակերպուեցաւ ընտրութեամբ հոգարարձուաց, հետեւեալ անձնաւորութիւններից. Մեծապ. Պ Յարութիւն Յովհաննէսեան Համխարեանց վաճառական և Յակոբ Աելիքեանց, նոյն հոգարարձական կազմակերպութեան մէջ արժանացայ ընտրուած լինելու և ես. ի ներքոյ ստորագրեալս (թէպէտ այն ժամանակ ես բացակայ էի քաղաքից), ապա հոգարարձական առաջի նիստում, հաստատութեամբ միւս հոգարարձուաց փիճակուեցաւ ինձ ընդունել հանգստարանի ներքին կառավարութիւնը:

Թէպէտ Հաւլարարի «Խօջիվանքի» հանգստարանի գործը չորս տարուայ ընթացքում չի լինի ասել, որ շատ արագ քայլերով է առաջ գնացել, բայց և այնպէս այս կարճատև նկարագրով կամեցայ ծանօթացնել հայ հասարակութեանը այն, ինչ որ մինչև այսօր իրադործուել է և թէ ինչ ապագայում ցանկալի է իրագործել:

Հաւլարարի «Խօջիվանքի» հանգստարանի ի 11 էն Ապրիլի 1883 թ. ց 22 ն Մարտի 1887 թ.

# Հ Ա Շ Ի Ի

Ընդունելով Հաւլարարի «Խօջիվանքի» հանգստարանը աննախանձելի դրութեան մէջ, հարկաւոր համարեցի մտնել կանոնաւոր կառավարութիւն, ուստի հիմնեցի գրասենեակ, կարգելով ա) մի կառավարիչ, սկզբում ամիսը 25 ուրբ. ապա 30 ուրբ. ոսճիկով, որի պարտականութիւնն է ամբողջ օրը գտնուել հանգստարանում, կառավարել պահապաններին, պահել գրքերը, ունենալ վերահայեցողութիւն բարեկարգութեան և կատարել ժողովուրդի պահանջը, իսկ կարևոր դիպուածներում, արտաքոյ նորա իրաւանց, ծանուցանել հոգարարձուին. բ) երեք մշտական պահապաններ, որոնք և գերեզման փորողներն են ու բնակվում են հանգստարանում, նշանակելով իւրաքանչիւրին ամսական 15 ուրբ. սրանց պարտաւորութիւնն է պատրաստել գերեզմանը և ազատ ժամերին կատարել հանգստարանի այլ և այլ գործերը:

Մտքեցաւ երկու անդորրագրական տպագրած ժապախեալ մատեաններ, մինը գերեզմանի պատրաստութեան, միւսը նաւիրատութեանց համար մի յիշատակարան շարաթական ել և մտից համար և մի մայր մատեան, որոյ մէջ քաղվում են հետեւեալ տեղեկութիւնները. ա) ազգանունք հանգուցնելոց:

ծխատէր քահանայից և վճարողաց. բ) հասակը և համար անդորրագրի որևէ գերեզմանի. գ) մուտք օրական. դ) նուիրատուութիւնք վասն բարեկարգութեան և ե) ելք օրական. Իսկ միւս նուիրատուութեանց անդորրագրական յանուն բարեկարգութեան մատեանի մէջ գտնվում են, անդորրագրոց համարները, նուիրողաց աղգանունքը և նուէրները.

## Մ Ո Ւ Տ Ք.

Ի 11 էն Ապրիլի 1883 թ. ց22ն Մարտի 1887 թ. թաղուածների թիւը է 3431 հոգի և գերեզման պատրաստելու վարձ ստացուել է 5402 ուր. 70 կոպ. միջին թուով իւրաքանչիւր գերեզմանի վարձ եղած է մտաւորապէս 1 ուր. 57  $\frac{1}{2}$  կոպ. որոնց մէջ հաշուած են և ձրի թաղուածները. նուիրատուութեանց համարների թիւը է 341 որից ստացուել է 1741 ուր. 60 կոպ. Մասնաւոր նուէրներ սեղանատանը ճաշելու առթիւ եղած են 81 ուր. 30 կոպ. Զատկի Երկուշաբթի օրերը երկու անգամ ժողովարարութիւնից գոյացել է 234 ուր. 10 կոպ. Այսպէս ուրեմն բոլոր մուտքն է եօթն հազար չորս հարիւր յիսուն և երկու ուրբլի յիսուն կոպ. 7452 ուր. 50 կոպէկ.

Ի 11 էն Ապրիլի 1883 թ. ց12ն Մարտի 1887 թ.

## Ե Լ Ք.

Գնուած են. ներկ և վրձին համարների համար 19 ա. 10 կ. թանաք և թուղթ 7. ա. 35 կ. մի վառարան 3 ա. 70 կ. կաւամաններ 1 ա. պարան գերեզմանի և ծառեր կապելու համար 16 ա. տախի նորոգութեան, մահաճակալ և դոյլ 2 ա. 20 կ. գրասենեակի աթոռներ 15 ա. լոմեր 8 ա. 30 կ. ապակիներ 2 ա. 40 կ. դռան փակարան 1 ա. 95 կ. ջներ 4 ա. սայլի վարձ 1 ա. 60 կ. սղոցներ և տապար 5 ա. 30 կ. բանալի 60 կ. տաճկաններ 15 ա. տաճկայի անիւներ 3 ա. 70 կ. գամ և կոճակներ 11 ա. 10 կ. բանուր մշակներին վարձ 19 ա. 20 կ. ջրհոր փորողի 3 ա. քարտաշին 15 ա. 42 կ. երկաթեայ բահեր, թիակներ և քլունկներ 75 ա. փայտեայ թիակներ 28 ա. 80 կ. քլունկների և բահերի կոթեր 15 ա. 50 կ. կոթերը շինող վարպետին 4 ա. 70 կ. քլունկներ սրելու և բոլագելու 45 ա. 7 կ. Մարտիրոսեանցի տպարանին վասն տպագրութեան անդորրագրական մատեանների. թղթի և կաղմի 17 ա. 50 կ. Վարդանեանցի տպարանին վասն տպագրելոյ մայր մատենի և անդորրագրական մատեանների 18 ա. 40 կ. Սարգսեանցին 8 գետտ Աղէքսանդրեան թղթի մայր մատենի և առանձին թղթի անդորրագրական մատեանների համար 17 ա. 28 կ. կազմարար Յակովբեանցին կազմերի համար 13 ա. 50 կ. ջրբեր Խաչատրին ջրի համար 1883 և 1884 թ. 61 ա. ոտատեղիք մաքրելու 50 ա. սեղանատան շուրջը փանդակ շինելու 31 ա. 50 կ. նոր ոտատեղի շինելու 20 ա. երկաթեայ մեծ դռան համար երկաթ և երկաթագործ Թայիրեանցին նոյն դռան շինելու 175 ա. հին պատերը 38 խոր. սաժ. նորից շինելու. քարի մշակների և որմնագիր Սարգսին վարձ 230 ա. հին պատերի կարկատանաց. մշակների և որմնագիր Սարգսին վարձ 38 ա. 30 կ. փողրատչիկ Գասպարին 1368 սաժ. ճանապարհները շինելու 375 ա. 50 կ. Թէդօ Բօրէույուն 1010 հատ տնկած ծառերի համար 328 ա. և 760 հատ ծառերի նեցուկների 38 ա. 25. կ. սայլապաններին, ծառերի համար բերած աղբի 85 ա. ջրբեր Գրիգորին համաձայն պայմանի վասն 1885 թ. ամբողջ ամառը իւրաքանչիւր ծառի օրուայ մէջ մի վեկրօ անած ջրի 210 ա. ջրբեր Սաֆարին նոյն պայմանաւ վասն 1886 թ. ամբողջ ամառը ծառերը ջրելու 120 ա. Զարար Իմամ Օղլուն 137 խոր. սաժ. ճանապարհների համար բերած խէճի, իւր մշակավարձով. 966 ա. մշակ Գասպարին երկաթուղու 80 խ. սաժ. հողերը նոր պարսպից հեռացնելու վարձ 260 ա. նուէրք, Ալթունեանցին, Մաքասչեանցին (կա-

աւարիչներ) և մշակին 24 ա. Պողոս Պողոսեանցին, չքաւորութեան պատճառաւ վերադարձուեցաւ գերեզմանի համար տուած 1 ա. 50 կ. մշակ Գասպարին պարիսպների շուրջը ներս և դուրս արևեր շինելու 126 ա. մշակ Տօնէին նոր ճանապարհներ բանալու Արևմտեան պարսպի կողմը 20 ա. Զարար Իմամ-Օղլուին ճանապարհների համար ի հաշիւ 67 խ. սաժ. բերած աւազի 245 ա. Լօժիձէ Գովսէպիին ի հաշիւ 270 նոր ծառերի խրեանց ներդրումներով 20 ա.

Ա յսպէս չորս տարուայ ընթացքում գերեզմանատան բարեկարգութեանց վերայ եղած բոլոր ծախսն է երեք հազար ութ հարիւր տասն և վեց ուսրլի եօթանասուն երկու կոպ. 3816 ա. 72 կ. բացի սորանից, 1883 թուին տուած է առձիկ կառավարչին և երեք պահապաններին 630 ուր. 1884 թ. տուած է 840 ա. 1885 թ. 895 ա. 1886 թ. տուած է 900 ա. 1887 թ. վասն Գունուար և Փետրուար ամիսների տուած է առձիկ 150 ա. Զորս տարուայ ընթացքում բոլոր տուած առձիկն է 3415 ա. Ընդամենը ծախսն եղած է գերեզմանատան բարեկարգութեան և առձիկների համար. եօթն հազար երկու հարիւր երեսուն և մէկ ուսրլի եօթանասուն երկու կոպ. 7231 ա. 72 կ.

Ա յսպէս ուրեմն 7452 ա. 50 կ. մուտքից հանելով 7231 ա. 72 կ. ելքը, առձեռն գրամ մնում է ց22 ն Մարտի 1887 թ. 220 ա. 78 կ.

Օգտուելով մտքած կանոնաւոր գրքապահութիւնից, աւելորդ չեմ համարում ներկայացնել ստատիստիկական համեմատութեանց համար հանգուցեալների հետեւեալ քաղուածքը.

		Արական	Իգական
Հասակք 1	օրականից մինչև 10 տարեկան թաղուածն	967 հոգի	909 հոգի
•	10 տարեկանից • 30	291 •	176 •
•	30 • 50	300 •	166 •
•	50 • 70	230 •	146 •
•	70 • 90	99 •	116 •
•	90 • 100	4 •	7 •
•	100 • 107	3 •	17 •

Ուրեմն արական սեռի թաղուածների թիւը սկսեալ մի օրականից մինչև հարիւր եօթն տարեկան հասակը է 1894 հոգի, իսկ իգական սեռի է 1537 հոգի, որի մէջն է և մի հոգի 120 տարեկան, Ծնւթ. ա) հանգուցեալների մեծ ը կազմում են փոքրահասակները, որոնցից մօտաւորապէս 400 հոգի մեռել են ծաղկից. բ) թէ մեծերի և թէ փոքրերի մեծ մասը Հաւլարարից են.

Ա յսպէս ուրեմն երեխայք մեռած են 1876 հոգի, իսկ 10 տարեկանից մինչև 120 տարեկանը 1555 հոգի. Ընդամենը չորս տարուայ ընթացքում թաղուածների թիւն է 3431 հոգի.

Ասած է. «Եթէ կամենում էք հասկացողութիւն ստանալ որևէ ազգի վերայ մտէք նորա գերեզմանատունը».

Ինչպէս վերը յիշեցի, տեսնելով գերեզմանատան աննախանձելի դրութիւնը, որտեղ մեր սիրելի և յարդելի ազգականների, բարեկամների և ազգակիցների մարմիններն են ամփոփուած, ուր ազգը ծախսել է մեծամեծ գումարներ և քրտինք թափել և որը դարձել էր մի աւերակ, սրբազան պարտք համարեցի այդ շարեաց առաջն առնելու, ըստ չափու կարողութեան. ուստի նախ հանգստարանը շրջապատուեցաւ քար ու կրից հոյակապ պարիսպով շրջապատելով նորա շմար, Աւելացաւ հանգստարանի Արևելեան կողմում նոր հողեր, գետեզելով նոյն պարսպի մէջ և այդ հողերը բաժանուեցան կարգերի, կանոնաւոր ճանապարհներով, այնպէս որ իւրաքանչիւր գերեզման ունի աջ և ձախ ճանապարհներ, ծածկուած խէճով, նոր պարսպից հեռացուեցաւ երկաթուղու ամած մեծ քանակութեամբ հողերը, պարսպի գրսի և ներսի կողմից շինուեցան արևեր պարիսպների ապահովութեան համար, նորոգուեցան հին պատերը 38 սաժ. տարածութեամբ և կարկատուեցան հին պատերի մի քանի մասերը. Ընկուեցաւ հանգստարանի

գլխաւոր մուտքի երկաթեայ դուռն և գերեզմանատան շուրջը ու զանազան ուղղութիւններով կարեւոր ճանապարհներ, լայնութեամբ առաւել քան 2 սաժ. տարածութեամբ 1368 քառ. սաժ. Նոյն ճանապարհները ծածկուեցան խէճով և աւազով. տնկելով Նոցա երկու կողմերը 1010 լիպայի ծառեր, որոնք իւր ժամանակին ջրփումեն Գոի ջրով, Նոյնպէս մտադրութիւն կայ շարունակել ծառերի տնկելը ինչպէս ամբողջ գերեզմանատան շուրջ. պարիսպներին կից. Նոյնպէս և արևելեան կողմում ձեռք բերած և կարգերի բաժանուած հողերի վերայ, Այսպիսով հանդստարանը իւր բարեկարգ ճանապարհներով և բուսականութեամբ, ապագայում մեծ ծառայութիւն արած կլինի բաղմարնակ Հաւլարարի բնակչաց, առողջապահական տեսակետից, որից քաղաքի այդ մասը բոլորովին զուրկ է:

Վերոյիշեալ բոլոր բարեկարգութիւնները մտցնելով, ժողովրդին տեղիք տրուեց բարեկարգելու իւրեանց սիրելիների գերեզմանները, գնելով Նոցա վերայ արձաններ, տապանաքարեր, շինելով վանդակներ և ըն որոնք առաջուայ ժամանակներում անապահով էին: Թէպէտ վերագրեալ բարեկարգութիւնները մտցրած են, այնու ամենայնիւ բոլոր ցանկալի կարգ ու կանոնները չի լինի իրագործել, մինչև որ գերեզմանատան միւս մասը չը շրջապատուի նոր պարսպով. իսկ այդ բանը մինչև այսօր մնացել է հանդստարանի հիւսիսային կողմի հողերի հարցի պատճառաւ, որոնք կարեւոր են ևս ձեռք բերել:

Ամանք կարող են մեզ հարցնել թէ՛ ի՞նչ նշանակութիւն ունին քարերի վերայ գրուած և գերեզմանների վերայ գրած համարները, երբ կարող են բոլորովին անհետանալ. ի հարկէ, մի կողմից այդ հարցը չի լինել անտեղիքայց մտցնելով այդ, կամեցայ ժամանակաւորապէս միայն պահպանել և և չկորցնել գերեզմանների հետքերը. մինչև իրագործուէր ինչպէս վերը ասացի, նախ գերեզմանատան մնացեալ պարսպի շարունակութեան աւարտուիլը, երկրորդ, մեծ ճանապարհներից յարմարութեան համար նեղ ճանապարհներ բանալը, զանազան կարեւոր ձիւղերով և ուղղութիւններով: Այն ժամանակ ամբողջ գերեզմանատունը բաժանել մի քանի գլխաւոր թաղերի. ցուցակագրել բոլոր հին թաղուած հանգուցեալների ազգանունները, մտցնելով նմանապէս մայր մատենանի մէջ իւրեանց համարներով. (այն ժամանակ գերեզմանների վերայ գրած համարները կը փոխարկուեն երկաթի) այնպէս որ պահանջուած գէպքերում կարելի լինէր ազգականաց և բարեկամաց իսկութեամբ ցոյց տալ իւրեանց սիրելիների գերեզմանները, որոնք մայր մատենանից և ընդհանուր մակարդակից կերևան որ հանգուցեալը այս կամ այն թաղումն է թաղուած և այս ինչ համարաւ: Գորանով կը վերացուէին այն բոլոր անյարմարութիւնները, որոնք մինչև այսօր շարունակուել են. օրին. նոր գերեզմանի համար շատ անգամ փորվում են մի և նոյն տեղերը, դուրս ածելով հանգուցեալի ոսկրները և երբեմնապէս անգիտակցարար բացվում են թաղուածների դիակները:

Յետ բաժանման ամբողջ գերեզմանատունը թաղերի քանի մի կենդրոններում շինել հսկող պահապանների համար դիտողասենեակներ, որոնք միմեանց հետ ունենան յարակցութիւն թելերի միջնորդութեամբ, որ պէտք եղած ժամանակին կարողանան հեշտութեամբ տեղեկացնել միմեանց գերեզմանատան մէջ պատահած անկարգութիւնները հետացնելու: Եւրաբանչիւր թաղի պահապանը բացի գերեզման փորելը, պարտաւոր կլինի անվնաս պահպանելու, նոյնպէս և մաքրելու իւր թաղը: Գերեզմանատան ճանապարհների վերայ դարսել շուգունէ նստարաններ և ճանապարհների մի քանի կենդրոններում, շուգունէ սիւների վերայ կպցնել կարգ ու կանոնների ամենակարեւոր հետևեալ մի քանի քաղուածքները, այցելող ժողովրդի համար, օրին. այցելողները կարող են մտնել գերեզմանատուն ամբողջ օրը, մինչև երեկոյեան որոշ ժամը չը մանգալ գերեզմանների վերայ, չպոկել բոյսերը և ըն:

Յետ այնորիկ կը հրաւիրուեն հանգուցեալների տերերը իւրեանց հանգուցեալների ծառայած տապանաքարերը ուղղելու, իսկ որոնք չունեն գերեզմանի վերայ քարեր, անկարգ կիտուած հողերը շինել կանոնաւոր և վայելուչ ձևով: Այսպիսով գերեզմանատուներ կստանայ վայելուչ և բարեկարգ դրութիւն: Եւ այսպէս, ամեն տեսակ վնասակար արգելքները հետացնելով գերեզմանները կը դառնան ծաղկանոցներ, ինչպէս վայել է բարեկարգ ազգերին:

Գերեզմանատան արեւմտեան կողմը, փողոցի վերայ շինել կրպակներ, այնպէս որ հանգստարանին նայող ետեի պատը լինի խուլ և բոլորովին չունենայ յարակցութիւն գերեզմանատան հետ, շինութեան բոլոր երկայնութեան մէջ տեղը թողնել մեծ դուռն, իսկ նորա գլխին գիտողասենեակներէից մինը որոնց մասին արդէն վերը յիշեցինք, այդպիսով փողոցի վերայ դռան աջ և ձախ, կողմանան տասն կրպակաշքեր, որոնց իւրաքանչիւրի վարձը միջին թուով հաշուելով ամսական հինգ ուրբլի, գերեզմանատուներ ոչ ոքին նեղութիւն չտալով կունենայ տարեկան մուտք 600 ուրբլի:

Աւերոգրեալ թէ շինած և թէ շինելի բարեկարգութիւնները մի առ մի թուելով աւելորդ չեմ համարում և յիշել թէ՛ ներկայացրած հաշուիցը երեւցաւ որ չորս տարուայ ընթացքում մուտքից, բացի կառավարչին և երեք սպասաւորաց տուած 3415 ո. ոստիկը, իրագործուել են և վերոյիշեալ զանազան բարեկարգութիւնները: Աւրեմն եթէ որ սորանից առաջ 10 կամ 20 տարուայ ընթացքում ձեռք բերած արդիւնքները գործադրուէին նոյն հանգստարանի վերայ, այսօր մեր ձեռնարկածը շէր լինիլ սկիզբը բարեկարգութեան և հանգստարանը իւր ծաղկեալ դրութեամբ, ինչպէս վերը ասացինք, կարող էր մեծ օգուտ տալ Հաւլարարի բնակիչներին և այնուհետեւ նորա արդիւնքներից կարելի էր մի աղքատանայ հիմնել:

Այսպէս, ղեկավարելով ցանկութեամբ գեղեցիկ և յարմար դիրք տալու մեր հանգուցեալ սիրելեաց յիշատակարանին, արեցի—ինչ կարողացայ և յայանեցի մի առ մի այն որ ցանկալի էր իրագործել և ապագայում, Այժմ մնում է ցանկալի ի դէպս յաջորդ այլ կառավարչին, աւելի ճարտարութիւն և աւելի յաջողութիւն, այդ յարգանաց արժանի տեղւոյն տալու այնպիսի կերպարանք, որով նա եթէ ոչ ի շարս նշանաւոր գերեզմանատների բարեկիրթ երկիրներում, գէթ Թիֆլիզում առաջին տեղը բռնէ հանգստարանաց շարքում և պատիւ բերէ Թիֆլիզի հայ հասարակութեան, վկայելով սորա ընտիր ճաշակին և յարգանաց զգացմանը դէպի իւր նախնի հանգուցեալների յիշատակը:

Իմ խորին շնորհակալութիւնը յայանում եմ բոլոր նուիրողաց և Թիֆլիզի արժանապատիւ հողեւորականաց որոնք միշտ օգնել են այս սուրբ և նուիրական գործին, մինչև անգամ չեն խնայել իւրեանց լուծմաները: Կը խնդրեմք ներողութիւն բոլոր նուիրողներից յանուն հանգստարանի բարեկարգութեան, որ աղգանուները չկարողացանք տպագրել մի առ մի, բայց և աւելորդ չենք համարում, եթէ ցանկացողները բարեհաճէին տեղեկանալ ի ստուգութիւն թէ արդեօք մտցրած են անդորրագրական և մայր մատեանի մէջ իւրեանց աղգանուները և նուիրած գումարները, թէ ոչ:

Ինչ վերաբերում է հանգստարանի շուրջ թէ շինած նոր պարսպի և դորա առթիւ եղած ժողովարարութեանց մանրամասն հաշուի, որը սկզբից և եթ ղեկավարել է Մեծապ. Պ. Յարութիւն Յովհաննէսեան Ըամխարեանցը, պատիւ կունենայ իւր ժամանակին լրագրութեանց միջոցաւ ներկայացնել հայ հասարակութեանը:

Հոգարարձու Միքայէլ Սալամբէկեանց: